

ևս ի վերայ որդւոյն Յակոբայ ողորմածն Աստուած, ցուցանէ մարգարէիս և զշինումն տաճարին փառաւոր քան զառաջինն, ի ձեռքն հրեշտակին, որ մտեալ ձողաչափէր շուրջանակի զտեղի տաճարին, զոր պատմութիւնն ցուցանէ: Որ նշանակէր խորհրդաբար զշինումն կաթողիկէ եկեղեցւոյ ի Տեառնէ մերմէ՝ ձողաչափեալ ի մարմին նորա խաչին խորհրդով: Իսկ տանին զմարգարէն ի գուռքն փակեալ և տալ հրաման, թէ ոչ ոք մըտցէ և ելցէ բայց միայն արքայն Խորայէլի Տէր մեր, որ ել ի կուսական արգանդէն և զկուսութիւնն անխախտելի պահեաց: Այլ և նովին խորհրդով երաց զամուլ արգանդ աւազանին և բազմածնունդ արար ի ծոցոյ անտի երկնաւոր խորհրդով, առական բանին, զոր ասէ, թէ ահա ջուր հոսէր ի վերայ գաւթացըն: Իսկ ծառատունկն շուրջ զափամբ գետոյն՝ զորդիսն աւազանին անուանէ: Եւ չափին հազար չափով միանգամ և երկիցս և երկցս՝ զյորդանադաց գետ աւետարանին ցուցանէ: Եւ կացուցանին որսորդ՝ զառաքեալսն գուշակէր, սր կացին որսորդ ի վերայ աղբի մարդկան ի Տեառնէ մերմէ: Ըստ այնմ՝ Արարից զձեզ որսորդս մարդկան, որով ելին ուռկանաւորք աւետարանին և որսացան զմարդիկ ի կեանսն յաւիտենից, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում պատիւ և զաւրութիւն յաւիտեանս, ամէն:



## ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

«Արարատի» նախորդ համարում հաղորդել էինք, որ Լեոն Թ. Գ. պապն ի միջի այլոց ձգտում է կապ հաստատել նաև անգլիական եկեղեցու և վատիկանի միջև: Արդ. Չատիկ օրն իսկ հրատարակուել է պապի կոնդակն «առ պատուական ազգն անգլիացւոց», որով Հռովմի քահանայապետը իրեն միայն յատուկ ճարտար ու խորամանկ ոճով հրաւիրում է անգլիական Ժողովրդին դառնալ «ճշմարիտ քրիստոնէութեան փարախը՝ Փրկչի երկրաւոր փոխանոր-

դի գլխաւորութեան ներքոյ» և վերահաստատել այն եղբայրական սիրոյ սերտ կապերը, որ խղուեցան Թ. Չ. դարում «եկեղեցու դէմ՝ յարուցուած ընդհանուր փոթորիկ»: Հնորհիւ:

Պապը մեծ վարպետութեամբ շողջորդութեւ լով անգլիացւոց ազգային ինքնասիրութեան՝ ցոյց է տալիս այն հիմունքը, որով կարող էին միանալ երկու քոյր եկեղեցիները, և այն խնդիրները, որոնց լուծումն արդէն իսկ թէ անգլիական հասարակութեան ուշադրութեան առարկան է և թէ Լեոն Թ. Գ. պապի իդէալը. այդ խնդիրներն են, պապի կոնդակի ասելովը, սօսիալական հարցը և հետզհետէ աճող նիւթապաշտական ուղղութեան առաջն առնելը:

— Լեոն Թ. Գ. պապի մի յատուկ հրամանով որոշուած է 300,000 ֆր. մի դրամագլուխ յատկացնել Հռովմում մի առանձին քարոզական ձեմարան հիմնելու Պալիցիայի կաթողիկոսաների համար, Բացի սոցանից նոյն ձեմարանում սահմանուում է 20 թողակ բողղարացի, խրուաթ և այլ սլաւոնական ցեղերի պատանիների համար, որոնց կրթութեան խնդրին պապն առ հասարակ մի դարմանալի հոգատարութեամբ է վերաբերում:

— Պապի միաբարական ձգտումների մի արտայայտութիւնն է նաև յոյների համար Կ. Պօլսում մի նոր ձեմարան հիմնելու որոշումը: Կարգինալներին մի յանձնախմբի՝ կազմած ծրագրի համաձայն՝ այդ ձեմարանը պիտի ընդունուին միայն հոգեւոր դպրանոցներում իրանց ուսումն աւարտած յոյն պատանիներ: Պապի ցանկութիւնն է հիմնել մի մի հոգեւոր դպրանոց նոյնպէս և արևելեան միւս ազգութեանց պատանոջ կաթողիկոսների համար, բացի դորանից մտադրութեան կայ հիմնելու Կ. Պօլսում նոյն իսկ մի համալսարան յոյների համար:

## ՌՈՒՍՍ ԵԿԵՂԵՅԻ

Ռուս հոգեւորականները և մասնաւորապէս քահանաները, վերջերս մի խիստ օգտակար գործի բարի օրինակ են տալիս, եկեղեցու վիճակի վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ ընդհանրացնելու նպատակով նոքա սկսել են ուսումնասիրել մի մի թեմի կամ վիճակի եկեղեցիների, հոգեւորականների, եկեղեցական դպրոցների դրութիւնը և իրանց ուսումնասիրութեան արդիւնքը առանձին տետրակներով հրատարակում են ի գիտութիւն հասարակաց: Այդպիսի մանրամասն տեղեկագրեր լոյս են տեսել արդէն Պոլտաւայի և Վաղանի թեմերի վերաբերութեամբ:

— Մի երկու տարի առաջ ուսաց մի քանի

եկեղեցիներ ու վանքեր շատ քան իսկ հաստատեցին ժողովրդի մէջ կրօնական—բարոյական գաղափարների տարածման գործի նպաստելու նպատակով: Այդ քանակութեամբ մի մի թեթև պահարաններ են կրօնական—բարոյական բովանդակութեամբ գրքերով և տետրերով, որ շրջանում են գիւղէ գիւղ և ամէն տեղ մի քանի օր պահելով՝ բաժանուում են ժողովրդին կարգաւ:

— «Յերկ, վեսան»,-ի յառաջ բերած տեղեկութիւններից երևում է որ ուսաց թեմական «բարոյական յանձնաժողովների» գործը առ հասարակ շատ դանդաղ է զարգանում: Հնայելով առաջնորդների յորդորներին՝ «յանձնաժողովների անդամների թիւը ոչ միայն չէ աւելանում, այլ և շատ թեմերում ընդհակառակը նուազում է: անդամ համարուողներից շատերը նոյն իսկ իրանց տարեկան անդամավճարները չեն հատուցանում:

#### ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈՋԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԵԴԱ- ԿԱՆՆԵՐԻ ՄԵՋ:

Արեւելքում գործող բողոքական միսիոնարների համար առ հասարակ պէտք է այն ուրախալի երևոյթը նկատողութեան առնել, որ թէ նոքա և թէ նոցա ուղարկողները սկսել են վերջին ժամանակներու աւելի զգուշութեամբ և պատկառանքով վերաբերուիլ գէպի արեւելեան եկեղեցիները, անցնելով գործած սխալները հետզհետէ ճանաչել և զգալ, որ հնադարեան քրիստոնեաների մէջ մի նոր դաւանութեան քարոզելը առանձին աստուածահաճոյ գործ չէ, որ քրիստոնէութեան գործին ուղիղ մօտք այն ժամանակ միայն ծառայած կլինին, երբ ընդհակառակն կաշխատեն արեւելեան եկեղեցիներին նպատել իրենց ինքնուրոյնութիւնը պահպանելու և ներքուստ զօրանալով գործելու ոչ քրիստոնեայ հարեանների վերայ այն ազդեցութիւնը, ինչ որ հեռու աշխարհներից եկած մարդիկ գործել չեն կարող: Այսպիսի հայեացքի ջերմ պաշտպաններից մէկն է գերմանացի պատուոյ Ֆարէրը: Լինելով գլխաւոր օգնականը մեծանուն աստուածաբան և երայազէտ Գելիչի, որ նոր կտակարանը եր-

այերէն լեզուով թարգմանել է և հրէաների մէջ քրիստոնէութիւն տարածելու գործի համար շատ աշխատանք թափել՝ Ֆարէր նորա մահից յետոյ սկսեց աւելի մահմետականների վերայ ուշադրութիւն դարձնել և գործունէութեան կենդրոնավայրերի հետ ծանօթանալու նպատակով 3 տարի առաջ մի ճանապարհորդութիւն արաւ գէպի Պարսկաստան: Այստեղ ծանօթացաւ նա հայ ժողովրդի հետ և իւր հրատարակութիւնների մէջ մեծ գովեստով էր խօսում հայերի մասին, ջատագովում էր Հայոց եկեղեցու մեծ նշանակութիւնը՝ արեւելքում քրիստոնէութիւն պահպանելու և տարածելու գործի համար:

Նորա ճանապարհորդութեան հետեանքին այն եղաւ, որ շուտով երկու երիտասարդ աստուածաբաններ՝ Դր. Յերվիկ և կանդիտատ Կէօցլէ, Պարսկաստան ուղարկուեցան մահմետականների մէջ քրիստոնէութիւն քարոզելու նպատակով: Վերջինս իմ ուսանողութեան ընկերներից և ծանօթներից է և իմ Տիւրքիզէնում գտնուած ժամանակ երկու տարի առաջ, քննութիւն էր բռնում համալսարանում: Լուսնդուն, ընդունակ, հմուտ և յառաջադէմ իւր մասնագիտութեան մէջ՝ ազատ Եւրոպայի զուակր, գեռ կեանքի հաճոյքը չվայելած, արհամարհելով իւր առջևը բաց փայլուն ասպարէզները և ամէն վտանգ աչքի տակ առնելով թոյնում է տուն ու տեղ, թոյնում է սերտ սիրով իւր հետ կապուած, իւր նշանած աղջկան և գնում է մի օտար աշխարհ, բոլորովին անմշակ տատասկոտ հողի վերայ սիրոյ և ճշմարտութեան սերմերը ցանելու: Նա մանկութենէ միսիոնար լինելու համար չէր կրթուած, որ այդ գործի վերայ իբրեւ իւր ճակատագրի, իւր կեանքի անհրաժեշտ պայմանի վերայ նայէր: Առանոյ լինելով նա ամենաազատ դուարձալի օրեր էր անցրել, լսել էր դասախօսութիւններ ամենաազատամիտ ուսուցչապետների մօտ, ծանօթացել իւր ժամանակի գիտութեան այն չափով, ինչ